

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԻՏԱԼՔԵԻՍՏԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀՈՒՄ

Գ. Ա. ԲԱԲԱՅԱՆ

Ուսուցման գործընթացում գիտաաթեիստական աշխարհայացքի ձևավորման պրոբլեմներին նվիրված հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ առանձնացվում են առավել էական նշանակություն ունեցող մի շարք հարցեր՝ գիտելիքների դերը աշխարհայացքի ձևավորման գործում, գիտելիքներն աթեիստական համոզմունքների վերածելու էությունն ու եղանակները, ուսումնական գործընթացում սովորողների դիրքորոշման նշանակությունը, սովորողների տարիքային, անհատական առանձնահատկությունների հաշվառումը, ազդեցությունը գիտաաթեիստական աշխարհայացքի ձևավորման վրա և այլն:

Նշված հարցերի էության ըմբռնումը չափազանց կարևոր է բուհում ուսումնադաստիարակչական աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար:

Ապագա մասնագետի աշխարհայացքի ձևավորման գործում բացառիկ դեր են խաղում հասարակական գիտությունները: Բարձրագույն դպրոցում ձևավորվել է հասարակական գիտությունների դասավանդման լայն համակարգ: Ուսանողներն ուսումնասիրում են ՌՄԿԿ պատմություն, մարքս-լենինյան փիլիսոփայություն, քաղաքատնտեսություն, սոցիալիզմի տեսություն, կրոնի և աթեիզմի պատմություն, մարքս-լենինյան բարոյագիտություն և գեղագիտություն:

Հասարակական գիտությունների դասավանդումը կոչված է սովորեցնելու ուսանողներին, թե ինչպես օգտվել մարդու պրակտիկ գործունեության ամենազոր գեղեցիկ, ինչպես սոցիալիզմի գաղափարը վերածել նրա ամբողջ կայնքի ուղեցուցի: Մարքսիզմ-լենինիզմի խոր ստեղծագործական ուսումնասիրումը բարձրագույն կրթության համակարգում ապագա մասնագետի գիտաաթեիստական աշխարհայացքի ձևավորման վճռական նախադրյալն է:

Որոշելով մասնագետների պատրաստման աշխարհայացքային-դասակարգային ուղղվածությունը՝ հասարակական գիտությունները վճռական ներգործություն են ունենում գիտաաթեիստական աշխարհայացքի ձևավորման վրա: Որա հետ մեկտեղ հասարակական գիտությունների ամբիոնները ոչ միշտ և ոչ լրիվ չափով են հասարակական գիտությունների լաշխարհայացքային-դաստիարակչական պոտենցիալը օգտագործում ապագա ուսուցիչների՝ դպրոցականների գիտաաթեիստական դաստիարակության գիտակական, ստեղծագործական իրականացմանը նախապատրաստելու համար: Որան նախ և առաջ խանգարում է այն, որ մեր փիլիսոփայական և տնտեսագիտական ճակատը, ասենք և ամբողջ հասարակագիտությունը, գտնվում են կյանքի պահանջմունքներից որոշակի հեռավորության վրա¹:

Գաղափարախոսական, դաստիարակչական, կրթական ամբողջ աշխատանքի վերակառուցման սկսված գործընթացը պայմանավորում է հասարակական գիտությունների դերի հետագա աճը ուսումնառության ոլորտում:

Ուսումնադաստիարակչական գործընթացում հասարակական գիտությունների դերի բարձրացումը նպատակ է հետապնդում լուծելու հետևյալ խնդիրները՝

ա) ուսանողներին գիտելիքներ է տալիս մարդկության սոցիալական զարգացման ուղիների մասին, նրանց զինում համաշխարհային գործընթացի բոլոր կողմերի իմացության դիալեկտիկայով,

բ) ձևավորում է ապագա մասնագետի հոգևոր լինելիության, նրա գիտական համոզվածության զարգացման աշխարհայացքային բազան,

գ) ուսանողներին հուսալի մեթոդաբանական հիմք է տալիս բոլոր գիտությունների ստեղծագործական յուրացման համար,

դ) ապահովում է ուսուցման, դաստիարակության և զարգացման միասնականությունը ուսումնական գործընթացի բոլոր ձևերում ու տեսակներում,

¹ Տե՛ս ՌՄԿԿ 27-րդ համագումարի նյութերը, Եր., 1988, էջ 119:

ե) բավարարում է երիտասարդության գաղափարախոսական պահանջմունքները,

զ) վճռական դեր է կատարում բուրժուական գաղափարախոսության, հակասոցիալիզմի, բուրժուական փիլիսոփայական, սոցիոլոգիական, տնտեսագիտական, իրավագիտական համադրույթների, աջ և ձախ ունիզոնիզմի, նացիոնալիզմի մերկացման գործում,

է) դաստիարակում է ուսանողների հասարակական-քաղաքական ակտիվությունը, նպաստում ապագա մասնագետների կազմակերպական կարողությունների ձեռքբերմանը,

ը) նպաստում է անհատի ընդհանուր կուլտուրական աճին, ընդլայնում նրա մտահորիզոնը, զարգացնում ճանաչողական պահանջմունքներ, հետաքրքրություններ ու ձգտումներ:

Հասարակական գիտությունների ուսումնասիրումը ուսանողների, հատկապես ապագա ուսուցիչ-դաստիարակների գիտաթեխտական աշխարհայացքի ձևավորման միջուկն է, որը ապագա մասնագետների ձևավորման գործում իր աշխարհայացքային դերը կարող է կատարել հասարակական գիտությունների դասավանդման պրոֆեսիոնալ-մանկավարժական և գիտաթեխտական ուղղվածությունն ապահովելու գործում:

Մարքս-լենինյան տեսության դասավանդումն առանց պրոֆիլախի ուղղվածության հնարավոր չէ, քանի որ այն գիտության և պրակտիկայի ընդհանրացումն է, իսկ մյուս գիտությունների հետ ունեցած կապը հասարակական-քաղաքական գիտության և էությունն է, և յուրահատկությունը:

Մանկավարժական բուհում հասարակական գիտությունների դասավանդման մասնագիտական գործընթացը ենթադրում է բոլոր ֆակուլտետների աշխատանքների մեթոդական-մանկավարժական մշտական կոորդինացում: Միևնույն ժամանակ հասարակական գիտությունների յուրաքանչյուր ամբիոնում լուծվում են մասնագիտացման «սեփական» պրոբլեմները:

Փիլիսոփայության փոխկապվածությունը մանկավարժական բուհի պրոֆիլի հետ իրականացվում է ինչպես ամբողջ բուհի, այնպես էլ կոնկրետ ֆակուլտետի մակարդակով: Թե այս, թե մյուս դեպքում փիլիսոփայությունը հանդես է գալիս ոչ թե հանրակրթական, այլ հիմնարար գիտության դերում, որը ձևավորում է մանկավարժի ընդհանուր կուլտուրան և նրա պրոֆեսիոնալ վարպետությունը: Նման դրվածքի պայմաններում փիլիսոփայության պրոֆիլախի դասավանդումը հանդես է գալիս որպես պրակտիկայի, ապագա ուսուցիչ-դաստիարակների գործունեության կոնկրետ բնագավառի հետ փոխկապվածության ապահովման կարևոր ձև:

Փիլիսոփայության դասավանդման մասնագիտական ուղղվածությունը դրսևորվում է ամենից առաջ դասախոսությունների ժամանակ, երբ բացատրվում են փիլիսոփայության աշխարհայացքային դերը ապագա ուսուցիչ-դաստիարակի անհատականության կառուցվածքում, փիլիսոփայության կապը մանկավարժության և հոգեբանության հետ՝ դրանց պատմական զարգացման գործընթացում:

Փիլիսոփայության մասնագիտական դասավանդումը մի կարևոր կողմ էլ ունի. դա մասնագիտացվող առարկաների դասավանդման մեթոդաբանական, աշխարհայացքային ուղղվածությունն է: Հանրապետության բուհերի փիլիսոփայության ամբիոնները ձգտում են իրենց ուսումնական ծրագիրը շաղկապել ֆակուլտետների ուսումնական պլանների հետ, այն կողմնորոշելով դեպի ապագա ուսուցիչ-դաստիարակներին ցույց տրվող օգնությունը՝ նրանց նախապատրաստելով դպրոցական ուսումնական առարկաների ուսուցման գործընթացում աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորման գործին:

Ֆակուլտետների հետ հասարակական գիտությունների ամբիոնների կապն ամրապնդելու և այդ գիտությունների մասնագիտական ուղղվածությունն ու դասավանդումը լավագույնս կազմակերպելու նպատակով նշված ամբիոնների բոլոր դասախոսները կցվել են ֆակուլտետներին՝ հաշվի առնելով նրանց գիտական հետաքրքրություններն ու բազային կրթությունը:

Կիրառվում է այն պրակտիկան, երբ ուսանողները հաճախում են տարբեր ֆակուլտետների առաջատար մասնագետների դասախոսություններին, նրանց հրավիրում հանդես գալու ամբիոնում: Դասախոսական դասընթացների մասնագիտական ուղղվածությունն ամրապնդվում է սեմինար պարապմունքներում, երբ յուրաքանչյուր թեմա քննարկելիս հաշվի է առնվում ֆակուլտետի յուրահատկությունը:

Ամբիոնի գիտական և մեթոդաբանական աշխատանքը նույնպես կառուցվում է բուհի առջև ծառայած խնդիրների հաշվառման հիման վրա:

Փիլիսոփայության ամբիոնների դասախոսներն աշխատում են նաև պրոբլեմային ուսուցման, մասնագիտական կողմնորոշման հարցերի վրա, հետազոտում ուսանողների ճանաչողական գործունեության կառուցվածքը, նրանց աշխարհայացքի ձևավորման, սոցիալական ակտիվության զարգացման կոնկրետ հարցերը:

Ջաղաքատնտեսության դասավանդման մասնագիտական ուղղվածությունը հնարավորություն է տալիս ծիշտ ըմբռնելու օբյեկտիվ տնտեսական օրենքների տեղն ու դերը ժողովրդական կրթության և մշակույթի զարգացման համակարգում, ենթադրում է ուսանողների տնտեսագիտական հայացքների ձևավորման այնպիսի գործընթաց, որի իրականացումը օրգանապես զու-

գորդվում է հասարակական-արտադրական հարաբերությունների համակարգում ուսանողների ապագա տեղի և դերի վերլուծության հետ:

Սոցիալիզմի տեսության առարկայի հարուստ ու բազմազան պրոբլեմատիկան առաջադրում և լուսաբանում է ապագա ուսուցիչների կոմունիստական դաստիարակության հիմնական ուղղությունների վերաբերյալ հարցերը: Պասախությունների, գործնականների ժամանակ հանգամանորեն ջննարկվում են հանրակրթական դպրոցի մանկավարժի դերը սոցիալական զարգացման ծրագրի իրականացման գործում, սովորող երիտասարդության դաստիարակության համատեղ աշխատանքը կազմակերպելիս դպրոցի, ընտանիքի և արտադրական կոլեկտիվների սերո կապի ապահովման հարցերը:

Վերոհիշյալից բխում են որոշ նկատառումներ, որոնք ուղղված են հասարակական գիտությունների դասավանդման մասնագիտական ուղղվածության բարելավմանը.

1. Ներկայումս հասունացել է բուհի պրոֆիլը հստակորեն արտացոլող, ուսանողների մասնագիտական կողմնորոշման որոշակի համակարգ ներկայացնող ծրագրերի անհրաժեշտությունը:

2. Անհրաժեշտ է ունենալ մանկավարժական բուհերի համար նախատեսված դասագրքեր: Դա հնարավորություն կընձեռի հասարակական գիտությունների դասավանդման մասնագիտական ուղղվածության բարդ պրոբլեմները պարզաբանել ըստ ամենայնի, որը կբացառի դրանց լուծման նկատմամբ տևալնագործական մոտեցումները:

3. Համապատասխան շտկումների կարիք ունեն նաև ուսումնական պլանները: Մարքս-լենինյան փիլիսոփայությունը դասավանդվում է 2-րդ, մասամբ էլ 3-րդ կուրսերում, մինչդեռ՝ հիմնական պրոֆիլավորող գիտությունները դասավանդվում են բարձր կուրսերում:

Հասարակական բոլոր գիտությունների դասավանդումը կոչված է վճռորոշ դեր խաղալու ուսանողների մատերիալիստական աշխարհայացքի ձևավորման գործում, որն անբաժանելի է գիտաաթեիստական համոզվածությունից: Այսպես, օրինակ, դիալեկտիկական մատերիալիզմի դասավանդումը նպաստում է ոչ միայն մարքսիստական աշխարհայացքի, հեռուաբար և՛ աթեիստական համոզումների ձևավորմանը, այլև հնարավորություն է ստեղծում կրոնական և դրանց հետ սերտորեն առնչվող իդեալիստական մետաֆիզիկական կոնցեպցիաների ջննդատության համար: Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի պրոբլեմների ճարտարման գիտաաթեիստական ուղղվածությունը պետք է լինի այդ առարկայի դասավանդման պարտադիր պայմանը:

Ցավոք, դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասընթացի աթեիստական ուղղվածությունը միշտ չէ, որ հարկ եղած չափով ընդգծվում է ուսումնական ձեռնարկների հեղինակների կողմից: Բավարար ուշադրություն չի նվիրվում փիլիսոփայության դասախոսների համար նախատեսված մեթոդական ձեռնարկներում: Ըստ երևույթին դասագրքերի, ուսումնական և մեթոդական ձեռնարկների հեղինակները ելնում են այն հանգամանքից, որ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դրույթների յուրացումն ինքնին արդեն հանգեցնում է աթեիստական համոզումների ձևավորման: Մինչդեռ պրակտիկան երբեմն հերքում է նման ենթադրությունները: Լինում են դեպքեր, երբ բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ, որոնք ժամանակին հաջողությամբ ջննություններ են հանձնել դիալեկտիկական և պատմական մատերիալիզմից և նույնիսկ աթեիզմի և կրոնի տեսության պատմությունից, գերի են մտում կրոնական պատճաններին: Նման փաստերը, թեկուզ և սակավաթիվ, չի կարելի անտեսել:

Գիտաաթեիստական դաստիարակությունը դիալեկտիկական մատերիալիզմի ուսումնասիրման անկապտեի մասն է և կոչված է դնելու գիտաաթեիստական աշխարհայացքի հիմքերը, որոնց հետագա խորացումն ու կոնկրետացումը իրականացվում են այնպիսի գիտությունների յուրացման շնորհիվ, ինչպիսիք են պատմական մատերիալիզմը, մարքս-լենինյան բարոյագիտությունն ու գեոլոգիայի գիտությունը, աթեիզմի և կրոնի տեսության պատմությունը, սոցիալիզմի տեսությունը:

Ուսանող երիտասարդության գիտաաթեիստական գիտակցության ձևավորման գործում առանձնահատուկ տեղ ունեն նաև մյուս հասարակական գիտությունները՝ իրենց աթեիստական ուղղվածությամբ: Չէ՞ որ առագած մասնագետը պետք է ընդունակ լինի աթեիստական պրոպագանդա մղելու բնակչության շրջանում: Իսկ ուսուցիչ-դաստիարակը կոչված է դաստիարակելու աճող սերնդի, սովորող երիտասարդության գիտաաթեիստական գիտակցությունը: Ուստի ապագա ուսուցիչ-դաստիարակի պարզապես աթեիստ լինելը բավական չէ: Նա պետք է ընդունակ լինի իրականացնելու գիտաաթեիստական դաստիարակությունը, հաղթահարելու հավատացյալ դպրոցականների և նրանց ծողների կրոնական պատկերացումները, հալածանքները, սնտիպաշտությունը: Փորձված դաստիարակ դառնալու համար, որն ընդունակ լինի գործիմացությամբ կատարելու գիտաաթեիստական աշխատանք, բավական չէ որոշակի տեղեկություններ

² Տե՛ս Թ. Ե. Բурмистрова. Методика преподавания научного коммунизма. Л., 1983; Методика преподавания общественных наук. М., 1972; Основы методики преподавания философии. М., 1971; В. П. Рожин. Методика преподавания философии. М., 1975; Методика семинара по философии. М., 1975 и др.

ունենալ օբյեկտիվ իրականության ձևավորման զարգացման և օրենքների մասին: Անհրաժեշտ են նաև լրացուցիչ գիտելիքներ կրոնի, որպես առանձին սոցիալական երևույթի, ծագման ու զարգացման, նրա արդի վիճակի, կրոնական գիտակցության ձևավորման և փոփոխման օրինաչափությունների, գիտաաթեիստական դաստիարակության ձևերի, միջոցների ու մեթոդների մասին: Նման գիտելիքներ տալիս է «Գիտական աթեիզմի հիմունքներ» դասընթացը:

Ինչպես հայտնի է, գիտաաթեիստական դաստիարակությունը երկու համակարգերի բաղադրիչ տարր է: Նախ, ինչպես արդեն նշվել է, այն մտնում է կոմունիստական դաստիարակության համակարգի մեջ, ուստի կոմպլեքսային մոտեցման պահանջը նշանակում է, որ անհրաժեշտ է նաև նման մոտեցում կիրառել սովորող երիտասարդության գիտաաթեիստական դաստիարակությանը:

Գիտաաթեիստական աշխարհայացքի ձևավորման էական գործոն է կրոնի պատմության և աթեիզմի դերը ուսանողների գիտաաթեիստական ձևավորման գործում: «Աթեիզմը,— գրել է Կ. Մարքսը,— աստծո բացասումն է և հաստատում է մարդու կեցությունը հենց այդ բացասման միջոցով»³: Այստեղից էլ հետևում է, որ գիտական աթեիզմի խնդիրը (հետևաբար և՛ բարձրագույն դպրոցում նրա դասավանդման և ուսումնասիրման խնդիրը) ոչ թե պարզապես կրոնական իդեալի մերկացումն ու հերքումն է, այլ նրա փոխարինումը հումանիստական, իսկական մարդկային իդեալներով: Կրոնի հակահումանիզմը, որ բխում է նրա հիմնական՝ պատրանքային փոխհատուցողական ֆունկցիայից, հանգում է այն բանին, որ այն արժեքազրկում է մարդու կեցությունը: Աթեիզմի հումանիստական էությունը մարդու, որպես բնության զարգացման բարձրագույն արդյունքի, հաստատումն է: Աթեիզմը, մշակելով պոզիտիվ կենսաժողովրդագիր, մարդկային գոյության իրական իմաստն է համարում ակտիվ վերափոխիչ գործունեությունը, որը նպատակամղված է հասարակության յուրաքանչյուր անդամի, յուրաքանչյուր մարդկային անհատականության համակողմանի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Այսպիսով, գիտական աթեիզմի հիմնական հումանիստական ֆունկցիան ուղղված է հասարակության յուրաքանչյուր անդամի ակտիվ կենսադիրքի մշակմանը, որին վերջին ժամանակներս՝ վերակառուցման և հրապարակայնության պայմաններում, կուսակցությունը հարաճուն ուշադրություն է նվիրում:

Կրոնի սոցիալական գործառույթները քննելիս ընդգծվում է, որ կրոնի և աթեիզմի հակադրությունից հենց բխում է դրանց սոցիալական ֆունկցիաների հակադրությունը: Ընդ որում, շեջտվում է, որ եթե կրոնի հիմնական հատկանիշը հավատն է գերբնականի հանդեպ, ապա գիտաաթեիստական աշխարհայացքի հիմնական հատկանիշը հավատն է բուն մարդու նկատմամբ, այն համոզմունքը, որ մարդն ընդունակ է իր առջև ծառայող կենսական պրոբլեմները լուծելու առանց ինչ-որ գերբնական ուժերի օգնության: Այստեղից հետևություն է արվում. եթե կրոնի հիմնական, յուրահատուկ գործառույթը պատրանքային-փոխհատուցողականն է, ապա գիտական աթեիզմի հիմնական յուրահատուկ գործառույթը հումանիստականն է, որի էությունը արտահայտված է Մարքսի խոսքերում:

Իր հիմնական՝ հումանիստական նշանակությամբ զուգընթաց գիտական աթեիզմն ստանձնում է նաև այնպիսի դերեր, որոնք բնորոշ են դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի առարկաներին: Եվ դա պատահական չէ, քանի որ գիտական աթեիզմը փիլիսոփայական գիտություն է, որը հետազոտում է գիտաաթեիստական և նրան հակադրվող կրոնական աշխարհայացքի էությունը, դրանց առաջացման, զարգացման և պայքարի օրինաչափությունները, մի պայքար, որն ավարտվում է կրոնի հաղթահարմամբ և աթեիզմի հաղթանակով: Աշխարհայացքային առումով արտացոլում է գիտական աթեիզմի երկու հիմնական հայեցակետերը՝ ջրնադատական և պոզիտիվ: Ջրնադատականը, ինչպես նշվել է, հանգում է կրոնական աշխարհայացքի սևանկության բացահայտմանը: Պոզիտիվ հայեցակետը կողմնորոշում է դեպի գլխավոր նպատակը՝ գիտաաթեիստական գիտակցականություն և համոզվածություն: Որպես գիտական աշխարհայացքի կարևոր գործոն, նրա հիմքում ընկած է բնության և հասարակության օրինաչափությունների դիալեկտիկական-մատերիալիստական ըմբռնումը: Այս գործառույթունն էլ կողմնորոշում է դեպի գիտաաթեիստական համոզվածության ձևավորումը, ակտիվ կենսադիրքի մշակումը:

Համոզվածությունը հիմնվում է համապատասխան գիտելիքների վրա, որ ուսանողները ձեռք են բերում դասախոսությունների ժամանակ: Ուստի դասախոսության աթեիստական ուղղվածությունը մեծապես կամված է նրա բովանդակության խորությունից, գիտական ինֆորմացիայի նորույթից, ինչպես նաև կյանքից վերցված փաստական նյութից, որը նպաստում է թեմայի կամ նրա առանձին հարցերի յուրացմանը: Այստեղից բխում է աթեիզմի դասախոսության ինֆորմացիոն ֆունկցիան:

Նշվածներից բացի, գիտական աթեիզմի դասախոսությունները պետք է հագեցված լինեն

³ Տե՛ս Կ. Մարքս, Փ. Էնգելս. Из разных произведений. М., 1956, էջ 598:

Նաև հուզական-հոգեբանական գործոնով: Մեթոդապես ճիշտ կառուցված դասախոսությունը անհատի հետևողականության հետ մեկտեղ ուսանողների վրա թողնում է նաև հուզական-հոգեբանական ներգործություն, որը մեծապես նպաստում է զգացմունքների դաստիարակմանն ու ինքնադաստիարակմանը, միստիկային, հուզական, կրոնական կոմպլեքսին հակադրվող աթեիստական աշխարհազգացողության ձևավորմանը:

Բոլոր այս գործառնությունները դիալեկտիկորեն փոխկապակցված են և անխզելի միասնություն են կազմում:

Գիտաաթեիստական դաստիարակչական զգալի լիցք է պարունակում «Սոցիալիզմի տեսություն» առարկան ընդհանրապես: «Ժամանակակից կրոնները» դասընթացի թեման մեծ հնարավորություններ է ընձեռում քննադատորեն վերլուծելու ժամանակակից դավանանքների գաղափարախոսությունն ու գործունեությունը, նրանց հարմարվողականությունը սոցիալիստական իրականության պայմաններին, ժամանակակից հասարակության մեջ կրոնի ճգնաժամի հիմնական պատճառներն ու բնորոշ գծերը և նրանց դերը քաղաքական ու գաղափարախոսական պայքարի ընթացքում:

Մենք քննեցինք ուսանողների գիտաաթեիստական դաստիարակության միայն մի քանի հնարավորությունները, որ ընձեռում է դիալեկտիկական մատերիալիզմի դասընթացի և գիտական աթեիզմի հիմունքների ուսումնասիրումը: Գիտական աթեիզմի պրոբլեմներ, գիտաաթեիստական դաստիարակության հնարավորություններ են պարունակում բոլոր հասարակագիտական առարկաները՝ պատմական մատերիալիզմը, սոցիալիզմի տեսությունը, ՄՄԿԿ պատմությունը, քաղաքատնտեսությունը, բարոյագիտությունը, զեղագիտությունը և այլն:

ՄՄԿԿ պատմության դասընթացի ուսումնասիրությունն ապահովում է կրոնի և եկեղեցու նկատմամբ կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության քաղաքականության խոր ըմբռնումը ուսանողների կողմից: Զաղաքատնտեսությունը նրանց համար բացահայտում է հասարակության զարգացման տնտեսական օրենքների էությունը, համոզում, որ այդ օրենքներն օբյեկտիվ են, մերկացնում են ապրանքային ֆեոդալիզմի գաղտնիքը, որը աշխարհի մասին խեղաթյուրված պատկերացումների աղբյուրներից մեկն է: Պատմական մատերիալիզմի դասընթացը ծանոթացնում է հասարակության և անհատի մատերիալիստական ըմբռնմանը, նրա ուսումնասիրումը հանգեցնում է կրոնաիդեալիստական աշխարհայեցողության գիտակցված բացասմանը: Բացառիկ կարևոր աթեիստական նշանակություն ունի սոցիալիզմի տեսության դասընթացը, որն ապահովում է մարդկության պատմության մեջ ամենաառաջադիմական հասարակարգի կառուցման օբյեկտիվ օրենքների իմացությունը:

Հասարակական գիտությունների զարգացման արդի փուլը զգալի չափով բազմապատկում է (ամբողջությամբ վերցրած) հասարակագիտության և, որպես կառուցվածքային տարրեր, նրա մեջ մտնող առանձին հասարակական գիտությունների գործուն հնարավորությունները: Ավելի սերտ է դառնում նրանց կատարած ճանաչողական, աշխարհայացքային և գաղափարաքաղաքական դերի ու գործնական նշանակության փոխադարձ կապը: Հետևաբար, ամբողջության շրջանակներում այս ամենն զգալիորեն մեծացնում է հասարակագիտության հնարավորությունները ուսանողների գիտաաթեիստական աշխարհայացքի ձևավորման ասպարեզում:

Աթեիզմի և կրոնի տեսության պատմության, ինչպես և մյուս հասարակական գիտությունների դատավանդումը խարսխվում է ընդհանուր մանկավարժության սկզբունքների վրա, որոնք ընկած են բուրժուական մանկավարժական գործունեության հիմքում, ինչպես նաև մասնավոր մեթոդիկաների սկզբունքների վրա, որոնք որոշվում են աթեիզմի և կրոնի տեսության պատմության, իբրև ուսումնական առարկայի, յուրահատուկ բովանդակությամբ և կիրառական բընույթով:

Г. А. БАБАЯН—Научно-атеистическая направленность преподавания общественных наук в вузе.—Автор анализирует методику преподавания общественно-политических предметов в вузак и делает ряд предложений по усовершенствованию их обучения в духе нового мышления.